ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-292-07.06.2022-ՊԻ-011/0), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-292[1]-07.06.2022-ՊԻ-011/0), «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-292[2] -07.06.2022-ՊԻ-011/0), ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-292[3] -07.06.2022-ՊԻ-011/0),«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-292[4] -07.06.2022-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

№	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	***Կառավարություն***	«Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետ	«պատասխանատվության միջոցներից» բառերը փոխարինել «պաշտպանության միջոցներից» բառերով, ինչպես նաև օգտագործել «ազատությունից զրկելու հետ կապված պատիժ» ձևակերպումը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում և «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով օգտագործվող տերմինաբանությունը:	Ընդունվել է	Ընդունվել է

2.	***Կառավարություն***	Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ կետ	«Հաշտարարության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «4) մասնակցել սույն օրենքով նախատեսված հաշտարարների վերապատրաստման դասընթացներին.» Նշված փոփոխությունը պայմանավորված է հաշտարարների վերապատրաստումների կազմակերպման պարբերականության փոփոխմամբ: Մասնավորապես, Նախագծի 18-րդ հոդվածով նախատեսվող փոփոխությամբ վերապատրաստումները պետք է իրականացվեն առնվազն երկու տարին մեկ անգամ ներկայումս իրականացվող ամենամյա պարբերականության փոխարեն:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	***Կառավարություն***	Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ կետ, 10-րդ հոդվածի 2-րդ կետ, 17-րդ հոդված	«Քաղաքացիական դատավարության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածը:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	***Կառավարություն***	Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ կետ	Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասում «մահվամբ» բառից հետո լրացնել «կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով մահացած ճանաչվելով» բառերով՝ հաշվի առնելով Քաղաքացիական օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված՝ անձին մահացած ճանաչելու վերաբերյալ	Ընդունվել է	Ընդունվել է

			իրավակարգավորումները:		
5.	***Կառավարություն***	Նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ կետ	Օրենքի 12-րդ հոդվածում լրացվող 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «Դատարանի նախաձեռնությամբ հաշտարարություն նշանակվելու դեպքում դատարանի որոշմամբ սահմանված ժամանակահատվածում հաշտարարության իրականացման վարձատրության դրույքաչափը սահմանվում է Կառավարության որոշմամբ:»: Փոփոխության նպատակն է հստակեցնել Կառավարության կողմից հաշտարարների վարձատրության դրույքաչափեր սահմանելու վերաբերյալ լիազորող նորմի բովանդակությունը:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	***Կառավարություն***	Նախագծի 14-րդ հոդված	Հոդվածում առաջին իսկ կիրառումից հետո «արդարադատության նախարարին կից խորհրդակցական մարմին հանդիսացող որակավորման հանձնաժողով» արտահայտության առաջին իսկ կիրառումից հետո սահմանել դրա կրճատ տարբերակը, այն է՝ «(այսուհետ՝ որակավորման հանձնաժողով)», որից հետո կիրառել միայն կրճատ տարբերակը:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	***Կառավարություն***	Նախագծի 15-րդ հոդված	Առաջարկվում է սահմանել որակավորման վկայագրի գործողության դադարեցման նոր հիմք, այն է՝ կեղծ տվյալներ ներկայացնելը: Այսպես, առաջարկվում է Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետով.	Ընդունվել է	Ընդունվել է

			«9) հաշտարարը հաշտարարական գործունեության որակավորման վկայագիր ստանալու, ներառյալ՝ որակավորման ստուգմանը մասնակցելու համար ներկայացրել է կեղծ տվյալներ:»:		
8.	***Կառավարություն***	Նախագծի 16-րդ հոդված	Զորավարժություններին և վարժական հավաքներին մասնակցելու դեպքում սահմանել հաշտարարի գործունեության կասեցման ժամկետ:	Ընդունվել է	Ընդունվել է
9.	***Կառավարություն***	Նախագծի 17-րդ հոդված	Նախագծի 17-րդ հոդվածում առաջարկվում է ապահովել «Արդարադատության նախարարություն» ձևակերպման միատեսակ կիրառումը: Բացի այդ, «արտոնագրված հաշտարարների ռեեստր» արտահայտության առաջին կիրառումից հետո օգտագործել «ռեեստր» կրճատ տարբերակը:	Ընդունվել է	Ընդունվել է
10.	***Կառավարություն***	Նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մաս	«Հաշտարարների ցանկը» բառերից հետո լրացնել «(առանձնացված ցանկ)» բառերով՝ հոդվածով սահմանվող հաշտարարների երկու ցանկերի՝ միմյանցից տարբերակման նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
11.	***Կառավարություն***	Նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 18-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասում «ամենամյա պարտադիր վերապատրաստումներ անցկացնելու» բառերը փոխարինել «պարտադիր վերապատրաստումների անցկացման» բառերով՝ հաշվի առնելով հաշտարարների վերապատրաստման պարբերականության փոփոխումը:	Ընդունվել է	Ընդունվել է
12.	***Կառավարություն***	Նախագծի 21-րդ հոդված	21.1-ին հոդվածի 3-րդ մասում «ժողովի գումարման» բառերը փոխարինել «ընդհանուր ժողովի գումարման»	Ընդունվել է	Ընդունվել է

			բառերով՝ կարգավորման առավել հստակեցման նպատակով:		
13.	***Կառավարություն***	Նախագծի 21-րդ հոդված	21.1-ին հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետում «փոփոխություններ և լրացումներ է կատարում սույն մասի 1-ին կետում նշված փաստաթղթերում» բառերը փոխարինել «հաստատում է սույն մասի 1-ին կետում նշված փաստաթղթերում կատարվող փոփոխությունները և լրացումները» բառերով՝ ընդհանուր ժողովի լիազորության առավել հստակեցման նպատակով: Իսկ 21.3-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում «կանոնները» բառից հետո լրացնել «կամ դրանցում կատարվող փոփոխությունները կամ լրացումները» բառերով՝ ԻԿԿ խորհրդին վերապահելով ոչ միայն հաշտարարի վարքագծի կանոնների մշակման և դրանք ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնելու, այլև դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծերը ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնելու հնարավորությունը: 21.3-րդ հոդվածի 8-րդ մասում «և քվեարկում է վերջում» բառերը հանել՝ հաշվի առնելով, որ ըստ նույն մասի ԻԿԿ նախագահը կարող է մասնակցել խորհրդի նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով:	Ընդունվել է	Ընդունվել է
14.	***Կառավարություն***	Նախագծի 23-րդ հոդված	23.5-րդ հոդվածի 5-րդ մասը հանել՝ նույնաբովանդակ կարգավորումից խուսափելու նպատակով, հոդվածի համարակալումն ըստ այդմ խմբագրել: Իսկ 23.6-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

			հոդվածի 3-րդ մասում «անդամների» բառից հետո լրացնել «ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝» բառերով՝ սահմանելով, որ հաշտարարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը ընդունվում է խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:		
15.	***Կառավարություն***	Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ մաս	«Օրենքի 17-րդ հոդվածի 5-10-րդ մասերում Օրենքի» բառերից հետո լրացնել «17-րդ հոդվածի» բառերով՝ անցումային դրույթի առավել հստակեցման նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
16.	***Կառավարություն***	Նախագծի 24-րդ հոդվածի 3-րդ մաս	«ենթաօրենսդրական իրավական ակտերն» բառերը փոխարինել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
17.	***Կառավարություն***	Նախագիծ	Կատարել տեխնիկական բնույթի խմբագրումներ ողջ Նախագծում: Այդ թվում՝ ողջ Նախագծում լրացումներ կատարելիս օգտագործել «լրացնել հետևյալ բովանդակությամբ» բառերը «նոր» բառի փոխարեն՝ իրավական տեխնիկայի կիրառման միասնական մոտեցման ապահովման նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
18.	***Կառավարություն***	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը հանել կրկնությունից խուսափելու նպատակով՝ հաշվի առնելով, որ գործող օրենսդրական կարգավորումներով հաշտարարի վարձատրությունը արդեն իսկ նախատեսված է որպես դատական ծախս և դրա բաշխման վերաբերյալ կարգավորումները	Ընդունվել է	Ընդունվել է

		լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	նախատեսված են նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 187-րդ հոդվածով:		
19.	***Կառավարություն***	Նախագծի 4-րդ հոդված	Օրենսգրքի 122-րդ հոդվածում լրացվող 1.2-րդ մասում «վիճելի իրավահարաբերության կողմի (այդ թվում՝ նաև իր)՝ օրենքով նախատեսված պատասխանատվության ենթարկված լինելու մասին ապացույց» բառերը փոխարինել ««Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից որևէ մեկի կիրառման մասին որոշման պատճենը» բառերով՝ հաշվի առնելով նշված օրենքում օգտագործվող տերմինաբանությունը: Իսկ 1.4-րդ մասում «տեղեկատվությունը» բառը փոխարինել «տեղեկանքը» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
20.	***Կառավարություն***	Նախագծի 9-րդ հոդվածի 1-2-րդ կետեր	Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ. «1.1. Սույն օրենսգրքի 184-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով դատարանի նախաձեռնությամբ նշանակված հաշտարարության արդյունքում կողմերի չհաշտվելու դեպքում հաշտարարության հետ կապված ծախսերը կրում է այն կողմը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ: Հայցը մասնակի	Ընդունվել է	Ընդունվել է

			բավարարելու մասին դատական ակտ կայացնելիս հաշտարարության հետ կապված ծախսերը դատարանը կողմերի միջև բաշխում է բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:»: Փոփոխության նպատակն է հստակեցնել, որ կողմերի չհաշտվելու դեպքում հաշտարարության հետ կապված ծախսերը պետք է բաշխվեն դատական ծախսերի բաշխման վերաբերյալ գործող կարգավորումներին համապատասխան: Իսկ դատարանի կողմից նշանակված հաշտարարության արդյունքում հաշտության համաձայնության կնքման դեպքում հաշտարարության հետ կապված ծախսերը կողմերը կկրեն հավասարաչափ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Առաջարկվում է Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ կետը հանել, քանի որ Օրենսգրքի 187-րդ հոդվածի 3-րդ մասով գործող կարգավորումը առաջարկվում է թողնել անփոփոխ: Արդյունքում, եթե կողմերը չներկայացնեն արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարի վարձատրության վերաբերյալ ապացույց, ապա դատարանը կողմերի միջև կբաշխի հաշտարարի վարձատրության գումարը՝ այն բռնագանձելով հօգուտ հաշտարարի:		
21.	***Կառավարություն***	Նախագիծ	Կատարել տեխնիկական բնույթի խմբագրումներ ողջ Նախագծում: Այդ թվում՝ ողջ Նախագծում լրացումներ	Ընդունվել է	Ընդունվել է

			կատարելիս օգտագործել «լրացնել հետևյալ բովանդակությամբ» բառերը «նոր» բառի փոխարեն՝ իրավական տեխնիկայի կիրառման միասնական մոտեցման ապահովման նպատակով:		
22.	***Կառավարություն***	««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր	«ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառից հետո լրացնել «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառով՝ հաշվի առնելով որ Նախագծում կատարվել են նաև փոփոխություններ:	Ընդունվել է	Ընդունվել է
23.	***Կառավարություն***	Նախագծի 2-րդ հոդված	«20-րդ հոդվածը» բառերից առաջ լրացնել «Օրենքի» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
24.	***Կառավարություն***	Նախագծի 3-րդ հոդված	«Կառավարության սահմանած չափով որպես փոխհատուցում» բառերը հանել, «դիմաց» բառից հետո լրացնել «բայց ոչ ավելի քան Կառավարության որոշմամբ սահմանված չափով,» բառերով, քանի որ հարկ է հստակեցնել, որ վերադարձվող պետական տուրքի չափը չի կարող ավելի լինել մինչև 2 ժամ տևողությամբ իրականացվող հաշտարարության համար Կառավարության որոշմամբ սահմանված դրույքաչափից:	Ընդունվել է	Ընդունվել է
25.	***Կառավարություն***	Նախագծի 4-րդ հոդված	Հաշվի առնելով, որ Նախագծով առաջարկվող փոփոխություններով դատարանի կողմից նշանակվող հաշտարարության դեպքում հաշտարարին կողմերը պետք է վարձատրեն կամ հաշտարարության ընթացքում կամ հետագայում այն կարող է	Ընդունվել է	Ընդունվել է

			բռնագանձվել դատական ծախսերի բռնագանձման ընթացքում (այսինքն, հաշտարարը հետագայում չի դիմելու վերադարձվող պետական տուրքից իր վարձատրությունը ստանալու համար), ապա այլևս անհրաժեշտ չէ պահպանել պետական տուրքի վերադարձման վերաբերյալ Նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող կարգավորումը: Հետևաբար, Նախագծի 4-րդ հոդվածը առաջարկվում է հանել և պահպանել պետական տուրքի վերադարձման վերաբերյալ Օրենքի 38.1-ին հոդվածով սահմանված գործող կարգավորումը:		
26.	***Կառավարություն***	Նախագիծ	Կատարել տեխնիկական բնույթի խմբագրումներ ողջ Նախագծում: Այդ թվում՝ ողջ Նախագծում լրացումներ կատարելիս օգտագործել «լրացնել հետևյալ բովանդակությամբ» բառերը «նոր» բառի փոխարեն՝ իրավական տեխնիկայի կիրառման միասնական մոտեցման ապահովման նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
27.	***Կառավարություն***	«Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին»	Կատարել տեխնիկական բնույթի խմբագրումներ ողջ Նախագծում: Այդ թվում՝ ողջ Նախագծում լրացումներ կատարելիս օգտագործել «լրացնել հետևյալ բովանդակությամբ» բառերը «նոր» բառի փոխարեն՝ իրավական տեխնիկայի կիրառման միասնական մոտեցման ապահովման նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
28.	***Կառավարություն***	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. **«Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն քրեական	Ընդունվել է	Ընդունվել է

		օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր՝ 8-րդ կետով. «8) Հաշտարարը, այդ թվում նաև՝ գործունեությունը դադարեցված, պարզելու համար տեղեկություններ, որոնք նրան կարող են հայտնի լինել կապված հաշտարարության իրականացման նպատակով դիմելու կամ հաշտարարության իրականացման հետ:»: Փոփոխությունը պայմանավորված է նոր Քրեական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելով:		
29.	***Կառավարություն***	Հիմնավորում	Հիմնավորումներում կատարել տեխնիկական բնույթի լրամշակումներ:	Ընդունվել է	Ընդունվել է